

ՄՏՔԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ԸՆԿ. ԳՐ. ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ՇՈՒՐՁԸ
ԸՆԿ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ըր ղեկուցման մեջ ճիշտ նշեց պրոֆեսոր Ղափանցյանը, թե ժամանակակից հայերենը ձևավորվել է բարբառի հիման վրա. իսկապես, եթե մենք նկատի ունենանք ժամանակակից հայերենի քերականությունը, որը սորոշում է բառերի փոփոխության կանոնները, նախադասության մեջ բառերի միացման կանոնները և այդպիսով լեզվին տալիս է կուռ, իմաստավորված բնույթ (Ստալին), ապա պետք է ընդունենք, որ նա լեզվական նոր որակ է և իր հիմնական դրսևորումներով տարբերվում է զրաբարից:

Լեզվաբանների մեջ այժմ իշխում է այն տեսակետը, որ զրաբարը կրախի է մատնվել, հետևաբար նա չէր կարող զրվել մեր ազգային լեզվի հիմքում և իրոք-մեր լեզվի քերականության այնպիսի կարևոր կատեգորիաներ, ինչպիսիք են՝ խոնարհումը և հոլովումը, լրիվ չափով տարբերվում են զրաբարից: Օրինակի համար գրաբարի սահմանականի ներկան կազմվում է բայարնից և օժանդակ բայի վերջավորություններից, որոնք ձևով ձուլված *հն* բնին. ինչպես-գրեմ, կարդամ, թողում, խոսիմ, մինչդեռ ժամանակակից հայերենի ներկան կազմվում է անկատար ղերբայից և օժանդակ բայից, որոնք ձևականորեն ձուլված չեն. Օրինակ-գրում եմ, կարդում եմ, խոսում եմ, թողնում եմ, բնական է, որ գրեմ, կարդամ, թողում, խոսիմ ձևերից չէր կարող ստեղծվել գրում եմ, կարդում եմ և այլ ձևեր. բացի այդ՝ ժամանակակից հայերենում ունենք բաղմաթիվ ժամանակներ, որոնց համար հատուկ ձևեր չկային գրաբարում. օրինակ՝ սահմանական, ենթադրական, ըղձական և հարկադրական եղանակների մի շարք ժամանակները և այլն: Այս բոլորը չէին կարող առաջացած լինել գրաբարից, այդ բանը կարող ենք ասել նաև հոլովումների և ընդհանրապես քերականության մյուս կատեգորիաների մասին: Ուստի՝ սխալ են այն ընկերները, որոնք պնդում են թե գրաբարը զարգացել և դարձել է աշխարհաբար, դրահամար նրանք նշում են աշխարհաբարի և գրաբարի բառային հիմնական ֆոնդը. ինչպես նաև քերականական առանձին կատեգորիաների նմանությունները: Այդ ընդհանրությունները կան նաև բարբառների և զրական լեզվի մեջ: Այդ հանդամանքը հաստատում է, որ ինչպես հին հայերենը, նույնպես և ժամանակակից հայերենը և բարբառները միևնույն ժողովրդի լեզվական ընդհանրության անխզելի տարրերն են: Բրա հետ միասին նրանք չեն նույնանում միմյանց հետ և հանդիս են եկել հայ ժողովրդի զարգացման տարբեր շրջաններում: Սխալ են այն ընկերները, որոնք կարծում են թե լեզվի զարգացման ներքին օրինաչափությունները կապ չունեն հասարակության զարգացման հետ: Նրանք չեն հասկանում ըստ երևույթին, որ լեզվի ներքին օրինաչափությունները ինքնուրույն լինելով հանդերձ՝ ձևավորվում ու զարգանում են հասարակության հետ: Ահա թե ինչու ընկ. Ստալինն ասում է «...լեզուն ու նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ,

որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը»¹

Ժողովուրդների զարգացման և ազդ դառնալու զուգընթաց կազմավորվում են ազգային լեզուները, որոնք իրենց մեջ ընդունում են լեզվական այն բոլոր իրողությունները, որոնք, ստեղծվելով այդ լեզուն կրող ժողովուրդի զարավոր պատմության ընթացքում, չեն կորցրել իրենց կենսունակությունը և ընդհանուր համաժողովրդական նշանակություն ունեն։ Ամենից առաջ պահպանվում է բառապաշարի հիմնական ֆունդը և քերականական այն փաստերը, որոնք հատկանալի են տվյալ շրջանի հասարակության բոլոր անդամներին։ Սակայն այդ կենսունակ իրողությունները բոլոր դեպքերում և տարբեր պայմաններում միակերպ հանդես չեն կարող գալ։ Նայած թե ինչպիսի պայմաններում է կազմավորվում ազդը և ազդի լեզվի հիմքում բարրառոն է ընկնում, թե ժողովրդական ընդհանուր լեզուն, ըստ այնմ էլ նշվում են ազդի լեզվի զարգացման ու կատարելագործման ուղիները։ Այսպես, օրինակ, հայոց լեզվի կազմավորման պրոցեսը սկսվում է 17—18 դարերում, նրա զարգացման համար միանգամայն աննպաստ պայմաններում։ Այդ շրջանների ժողովուրդը գտնվում էր պարսկա-թյուրքական անտանելի լծի տակ, խոշտանգվում ու հալածվում էր անընդհատ և այդ պատճառով էլ հայ ժողովրդի կուլտուրան սկսում է զարգանալ մեծ մասամբ մայրերկրից դուրս, հայկական գաղութներում, իսկ ազգային լեզվի կազմավորումը ընթանում է ոչ թե որևէ բարրառու կամ համաժողովրդական ընդհանուր լեզվի, այլ «ուժեղ և եղբայրական» ճյուղի տարբեր բարրառուների հիման վրա։ Այսինքն՝ հայոց ազգային լեզուն սկզբնական շրջանում սկսում է զարգանալ ոչ թե որևէ բարրառու հիման վրա՝ իրեն կոչում օրինաչափություններ ունեցող լեզու, այլ հանդես է գալիս քերականական ձևերի բազմաթիվությամբ՝ որոշ հեղինակների մոտ արևելյան, իսկ ոմանց մոտ էլ արևմտյան տերիտորիալ բարրառուների իրողությունների գերակշռումով։

Հայաստանի մի զգալի մասը 19-րդ դարի առաջին քառորդի վերջում միակցվում է Ռուսաստանին։ Այդ ակտով բարելավվում է Ռուսաստանի ազդեցության տակ անցած հայերի գրությունը, համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում հայ կուլտուրայի, գրականության ու լեզվի զարգացման համար։ Արագանում է հայ ժողովրդի իբրև ազգ ձևավորվելու պրոցեսը Հայաստանի արևելյան հատվածում։ Վերանում է հայոց աշխարհարար լեզվի կազմավորման ընթացքում մինչ այդ արտահայտվող լեզվական խայտարեկությունը։ Այդ ժամանակաշրջանից արագանում է նաև ուժ ճյուղի բարրառուների, գլխավորապես Արարատյան բարրառու հիման վրա ձևավորվող հայոց լեզվի կատարելագործման պրոցեսը։

Հայ ժողովրդի արևմտյան հատվածը, որը թյուրք ասիմիլատորների խոշտանգումների ենթակա քարշ էր տալիս իր գոյությունը, նույնպես շարունակում է մասնակցել հայ կուլտուրայի և հայ գրականության զարգացմանը, այդ հատվածում նույնպես ստեղծվում են գրական արժեքավոր գործեր ժողովրդին հասկանալի լեզվով, որը սկզբնական շրջանում որոշ գրողների մոտ շատ քիչ բանով էր տարբերվում պոլսահայ բարրառուից։

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 40։

Սակայն ինչպես ամեն մի գրական լեզու չի նույնանում խոսակցական լեզվի հետ, նույնպես և Պոլսի բարբառը զրականության աստիճանի բարձրանալով՝ սկսում է մշակվել և քանի որ այդ մշակությունը մեծ մասամբ կատարվում էր մայր երկրից դուրս հայկական գաղութներում, չի կարողանում ճիշտ ուղիով ընթանալ։ Պրոֆեսոր Աճառյանը բազմաթիվ փաստերով ցույց է տվել, որ այդ բարբառը մշակվել է հայկական գաղութներում և այդ բարբառի մշակման մեջ ղլխավոր դերը կատարել են հայկական պոլսեցիները։ Նա գտնում է, որ պոլսի բարբառը մշակվել է նաև Վիեննայում և Վենետիկում։ Իսկ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամները, որոնք մասնակցել են լեզվի մշակմանը, իրենց ղերակշռող մեծամասնությամբ պոլսեցի են եղել։ Նրանք մեծ դեր են կատարել Պոլսի բարբառը զրականության աստիճանի բարձրացնելու և մշակելու մեջ։ Այդ փաստերը նկատի ունենալով այրոֆ. Աճառյանը նշում է, որ Պոլսի բարբառը պետք է հաղթանակեր առանց որևէ պատճառաբանության, մանավանդ որ Պոլսի բարբառի քերականությունը ընդհանրապես չի տարբերվում Արևմտյան Հայաստանի և Փոքր-Ասիայի հայ բարբառների քերականությունից, բոլորն էլ սահմանական ներկան կազմում են «կրճ» եղանակիչով և միայն մասնակի տարբերություններ ունեն։

Բայց զրականության աստիճանի բարձրացած այդ բարբառը զարձավ մեր ազգային լեզուն։ Ես կարծում եմ, որ ճիշտ են այն ընկերները, որոնք գտնում են, թե նա չզարձավ մեր ազգային լեզուն, և այդ հասկանալի է։ Ազգը ունի մի միասնական համաժողովրդական լեզու, հայ ժողովուրդը մի ազգ էր նախասովետական շրջանում, նա մի ազգ է նաև այժմ և նա ունեցել է և ունի իր ազգային մեկ լեզուն-արևելահայերենը։

Մեծ ընկերներից ոմանք հարց են տալիս, թե կարող էր արևմտահայերենը, ավելի ճիշտ Պոլսի բարբառը դառնալ մեր ազգային լեզուն, թե ոչ։ Այդ հարցը տեղին չէ, որովհետև ամեն մի բարբառ կարող է ազգային լեզվի հիմքում ընկնել, եթե զրա համար նպաստավոր պայմաններ լինեն։ Սակայն այդ պայմանները չէին կարող ստեղծվել արևմտահայերենի համար։ Բավական է միայն նկատի ունենալ այն հանգամանքը, որ արևմրտահայերենը մշակվում էր մայր երկրից դուրս և գնալով օտարանում էր ժողովրդին, ավելի ու ավելի էր կտրվում տերիտորիալ բարբառներից, մշակվում էր առանձին մարզկանց կողմից և դուրկ էր զարգացման հետանկարներից։ միայն այդ բանով պետք է բացատրել այն փաստը, որ արևմրտահայ զրական լեզվի շինարարներն ու մշակողները այնքան հեռու զնացին և զրական լեզուն «մաքրեցին» այն աստիճան, որ լրիվ չափով դուրս մղեցին նրան կենդանություն տվող բարբառային շատ իրողություններ։ օրինակի համար, նրանք զրական լեզվից դուրս վանեցին կոք շարունակական (կերթամ կոր), ցն ստորագասական (ուսեմ նէ, թեթե ուտեմ) մասնիկները, ցիս (ձայներնիս), ցուս (պարտեղներնուս) դերանվանական ձևերը, և այնպիսի խոտապահանջությամբ պատերազմ հայտարարեցին փոխառություններին, որ արևմտահայ զրական հայերենը զարձըրին արվեստական, ջերմոցային լեզու, որ հետագայում որքան էլ աշխատեցին արևմտահայ զրականության առաջադեմ թևի ներկայացուցիչները (Պարոնյան, Արփիար Արփիարյան և ուրիշները), այնուամենայնիվ չկարողացան այդ զրական լեզուն զարձնել հասկանալի և զարգացման հետանը-

կարներ ունեցող լեզու։ Այդ բանը նկատել են նույնիսկ 19-րդ դարի հայ լուսավորիչները։

Արևմտահայ գրականությունը ներկայացուցիչներից շատերը, ելնելով ազգային ծխական մտավորականի նեղ մտածելակերպից, վարում էին ամեն մի բառ հայացքների, հայաշունչ դարձնելու քաղաքականություն։ Այդ պատճառով էլ միջազգային շատ տերմիններ ու բառեր նրանց գործերում ստանում էին «հայաշունչ» կերպարանք. այսպես օրինակ-կլինոն դառնում էր շարժանկար, ռադիոն՝ ձայնասփյուռ, էվոլուցիան—բարեշրջություն, դիկտորը -խոսնակ, յոդը-մանիշ, խլորը—կանչոն, ֆոսֆորը—լուսածին, բալկոնը-արևնակ, պարոլը-անցախոս, մոտանորելիք և այլն։ Արևմտյան գրական հայերենը այն-քան է անհաս գրողների կնիքը կրում իր վրա, որ 19-րդ դարի 50-ական թվականներին հանդես են ելել մարզիկ, որոնք փորձում են նոր լեզու ստեղծել (Ռուսինյան)։

Արևելահայերենը, հակառակ արևմտահայության գրական լեզվի, բնական է մշակվել լայն հեռանկարներ ունենալով իր առաջ. իր ձևավորման առաջին իսկ շրջանից շնորհիվ ուսաց լեզվի բարերար ներգործությունը, նա ցուցարարում է ավելի կենսունակություն և ազգային գրական ընդհանուր լեզվի հատկություններ, քան արևմտահայերենը. նա, շնորհիվ հայ առաջադեմ գործիչների-Արովյանի, Նալբանդյանի և մյուսների. զարգացման ճիշտ ուղու վրա է դրվում, չի կտրվում ժողովրդական լեզվից։

Արևմտահայ գործիչները և հատկապես Մխիթարյանները մշակում էին գրական հայերենը այնպես, որ ինչպես առում է Գրիգոր Օտյանը «կրնանք օր մը անդգայաբար հասնիլ գրաբարը հասարակաց լեզու ընելու»։ Այդպիսի նպատակ չէին դրել իրենց առաջ ոչ թ. Արովյանը, ոչ Մ. Նալբանդյանը և ոչ էլ նույնիսկ Ս. Նազարյանը։

Թ. Արովյանը պայքարում էր այնպիսի լեզվի համար, որ ամեն մարդ հասկանա, որ ժողովրդի ծերտովն ըլիք, ճարիր հաղարինք ծառայի։

Մ. Նալբանդյանը ավելի հիմնավոր կերպով պաշտպանելով աշխարհաբարի իրավունքները, պնդում էր, որ պետք է թողնել ժողովրդական լեզվով, առանց ծառայանալու զավառական բարբառներին, միևնույն ժամանակ ամբողջ պահելով լեզվի ժողովրդականությունը։

«Հյուսիսափայլ» հրատարակությունը նոր շրջան է սկսվում հայոց ազգային գրական լեզվի պատմության մեջ. վերջնականապես վճռվում է գրարարի և աշխարհաբարի համար տարվող պայքարը հոգուտ աշխարհաբարի. «Հյուսիսափայլը» բաց է անում աշխարհաբարի զարգացման ուղիները, մշակում նրա կատարելագործման սկզբունքները, որոնք հիմնավորապես տարբերվում էին ժամանակի արևմտահայ հատվածի, հատկապես Մխիթարյանների ստեղծած մամուլի, ինչպես նաև արևելահայ որոշ պարբերականների (Ճոռաքաղա, Մեղու Հայաստանի և այլն) լեզվաշինարարական սկզբունքներից։ Այդ թերթերը, հակառակ «Հյուսիսափայլի», նպատակ էին դրել «որքան կարելի է մաքրել աշխարհաբար լեզուն և գրաբարին մոտեցնել օր ըստ օրէք» (Մեղու Հայաստանի)։

Սակայն կղերա-պաշտանոցական մամուլը և նրանց հետ կապված մտավորականությունը իդուր ֆանքեր էին գործադրում։ Աշխարհաբարը վերջնականապես հաղթանակել էր և «Հյուսիսափայլ» հրատարակմամբ կայունացել նաև նրա քերականությունը՝ շատ իրողություններով։

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած արագ քայլերով առաջ է ընթանում արևելահայ գրականությունը, նա սկսում է ուսուցչի դեր կատարել արևմտահայ գրականության համար: Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ռ. Պատկանյանը, Սմբ. Շահազիզը, ապա Պերճ Պոռջյանը, Ղ. Աղայանը, Ռաֆֆին, Շիրվանդադեն, Մուրացանը, Նար-Բոսը, Հ. Հովհաննիսյանը, Ա. Ծատուրյանը և ուրիշներ արևելահայ գրականությունը և հայոց ազգային լեզուն զարգացման նոր աստիճանի են հասցնում 19-րդ դարում: Այդ շրջանում արևմտահայ հատվածը նույնպես տվել է Մ. Պեչիկթալյանին, Պետրոս Դուրյանին, Հակոբ Պարոնյանին, Արփիար Արփիարյանին, Գրիգոր Զոհրապին և ուրիշներին: Նրանք ստեղծել են շատ արժեքավոր երկեր, որոնք շարունակում են և դեռ կշարունակեն մեզ զեղարվեստական հաճույք պատճառել, բայց այդ բոլորով հանդերձ նրանք մնում են իրեն առանձին դործեր, որոնք չեն կարողացել փոխել արևմտահայ գրականության տենդենցները, դնել նրան զարգացման ճիշտ ուղու վրա, որովհետև հայ ժողովուրդը Թյուրքիայում ապրում էր միանգամայն աննպաստ պայմաններում, զրկված էր զարգացման ու վերածննդի հնարավորություններից: Դեռևս Տերյանն է նկատել, որ հայ գրականությունը և լեզուն չեն կարող զարգանալ Թյուրքիայի տիրապետության տակ, «Տաճկաստանի վերածնությունը ես չեմ հավատում, ասում է նա, իսկ Ռուսիայի ապագան ինձ համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն հույսերը առաջավոր ողու գեմոկրատիայի հույսերին և իմ բաղձանքները նրա բաղձանքների հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ հիասթափվելու: Շարունակելով իր խորհրդածությունները, Տերյանն ասում է, թե որքան էլ «թերի լինի ողուսահայերի գրականությունը, նա իր մեջ առողջ զարգացման ավելի տարրեր է պարունակում, քան պոսականը, որովհետև... մեր գրականությունը կրել է իր վրա ողուսական պարզ ու պայծառ գրականության ազդեցությունը: Ռուս գրականության վրեժ պորգությունը սրտաբաց անկեղծության նույնիսկ ամենաթույլ ազդեցությունը ավելի ընդունակ է մեր գրականությանը կենդանություն, կենսունակություն ներշնչելու, քան այն բոլոր ծամածուծությունները՝ որ անում են, թեպետ գուցե շատ շնորհալի գրողներ, անվանելով այդ վերադարձ զեպի հայկական հին կրոնը, հեթանոսություն: Բասուտ հեթանոսություն է, դրա բովանդակությունը ուրիշ է: Բա նույն սնամեջ ազգամոլության ախտն է, դա նույն դարձուրելի բառերի սերն է, դա նույն անիմաստ բառերի կույտն է, որը ծանոթ է մեզ վաղուց ու վաղուց: Դուրյանին թող չմատնանշեն, թող չհիշեն և ուրիշներին. իմ խոսքը հոսանքին, ընդհանուր ուղղության է վերաբերում և ոչ առանձին գրողներին: Խոսքը վերաբերում է գրականությանը հանուր ոգուն ու շնչին» (Նույն տեղում, էջ 183):

Արևմտահայ գրականության առաջավոր թևի գրողների (Հ. Պարոնյան, Ա. Արփիարյան և ուրիշները) ջանքերը արևմտահայ գրականությունը լայն ուղու վրա հանելու և արևմտահայ գրական լեզուն ժողովրդին մոտեցնելու ընդհանուր ուղղության է վերաբերում և ոչ առանձին գրողներին: Խոսքը վերաբերում է գրականությանը հանուր ոգուն ու շնչին»

¹ Վ. Տերյան, Երկեր, հատ. 4, էջ 182:

² Նույն տեղում, էջ 183:

ղրողներին մեծ մասը շարունակեց միութնարյանների սրբապետած տրադիցիաները, հայերենը ճամբրազարգելու ծխական մտավորականի տենդենցները, իսկ ոմանք էլ հասան այն աստիճանին, որ առաջ քաշեցին անհասկանալի, խորհրդավոր լեզու մշակելու, հայերենը խնկաճող դարձնելու, ճաղամյան լեզվի մակարդակին պահելու հակաժողովրդական տեսակետներ: Այդ նկատառումով էլ միանգամայն իրավացի էին այն հայ զործիչներն ու զրականագետները, որոնք խիստ կերպով պայքարում էին հայոց լեզվի ինքնուրույնութունը խախտելու փորձ անողներին դեմ և մշակում էին հայերենը միանգամայն ինքնուրույնարար: Այդպես են վարվել հայ զրողները 19-րդ դարում և հետո, երբ կարիք է եղել հայերենի իրողութունների մասին խոսելու: Երանք ճիշտ կերպով բմբոնում էին, որ զրական հայերենը պետք է այնպես մշակել, որ հայ ժողովրդին հասկանալի մնա, որ Նալբանդյանի խոսքերով ասած, հարմար լինի ժամանակի հարկադրութուններին, համապատասխանի ժողովրդի պահանջներին և ճիշտ արտացոլի նրա լեզանքի ուղիսութունը, դառնա տյն հարմարավոր անոթը, որով ճամրղը թափում է իր միտքը իր նմանների մտքի մեջ: Հայոց աշխարհարար լեզուն, հակառակ դեպի գրարարը զրան քարշ տվող պահպանողական հայ ինտելիգենցիայի ձգտումներին, Ռուսաստանում դաստիարակված և ռուսական պրողրեսիվ զաղափարները որդեգրած հայ առաջադեմ ինտելիգենցիայի քանքերի շնորհիվ՝ 19-րդ դարում այնքան է մշակվում ու հղվում, որ կարողանում է բավարարել ժամանակի հայ զեղարվեստական և հրադարակախոսական գրականության պահանջները:

Հայոց ազգային լեզուն զարդացման նոր աստիճանի է հասնում 20-րդ դարի սղգրներին, երբ հայկական իրականության մեջ հանդես են գալիս նոր թերթեր և նոր զրականութուն, որոնք հայ գրականության ու լեզվի մեջ բերում են այն լավաղույնն ու կենսունակը, որ արղեն ստեղծել էր ռուս առաջավոր միտքը:

Սովետական պայմաններում հայոց լեզուն սկսում է իր զարդացման ռսկեղարը ապրել: Նա կարծ ժամանակում հարստանում է սովետական նոր կյանքի ու կուլտուրայի, արվեստի ու տեխնիկայի, գրականության ու զիտության հետ կապված նոր բառերով ու տերմիններով: Հայերենը դառնալով պետական պաշտոնական լեզու և ձեռք բերելով նոր ֆունկցիաներ, ոչ միայն հարստանում է այդ նոր ֆունկցիաների հետ կապված բառերով ու դարձվածքներով, այլև բարձրանում է նրա տեսակարար կշիռը ամբողջ հայ ժողովրդի աչքում. նա դառնում է այն միակ լեզուն, որով զարդանում է հայ ազգային զրականութունը, հայ ժողովրդի կուլտուրան ու արվեստը, որով դաստիարակվում է հայ երևխան—դառնալով կոմունիզմի աննկուն մարտիկը: Այս նոր պայմանները, նոր խնդիրներ են զնում մեր զրողների և լեզվարանների առաջ. մինչղեռ մեր շատ ընկերները ճիշտ չեն մոտենում առանձին տերմինների և բառերի օգտաղործմանը: Ես զեմ եմ այն բոլոր ընկերների մեթողին, որոնք զրարարային ձեեր են օգտաղործում: Խոսքը իհարկե այնպիսի գրարարային ձեերի մասին չէ, որոնք արղեն մերվել են աշխարհարարին: Ծիշտ չեն նաև այն ընկերները, որոնք արեմտահայերի իրողութունները, քերականության օրենքները մտցնում են ժամանակակից հայերենի քերականության մեջ. Նույնիսկ մեր սեսիաներում ելույթներ ունեցած որոշ ընկերներ պահանջել են ստեղ-

ծել արևելահայ և արևմտահայ լեզուների քերականական իրողություններից կազմված մի համադրական լեզու։ Այդ սխալ տեսակետ է։ Այս բոլորից հետևում է, որ մեր ազգային լեզվի հետագա կատարելագործման հարցերը քննելիս, ոչ թե պետք է ելնել հայ անցյալի զրական լեզուներից և բարբառներից, ինչպես հակված են կարծելու որոշ լեզվաբաններ, այլ պետք է ելնել մեր լեզվի արդի վիճակից և մշակել մեր լեզուն նկատի ունենալով սոցիալիստական ազգերի կուլտուրաների ու լեզուների զարգացման հեռանկարները և այնքանով օգտագործել հին լեզուներն ու բարբառները, որքանով նրանք չեն հակասում հայերենի ընդհանուր խնդիրներին։

Այս բոլորից հետևում է, որ չի կարելի մեր ազգային լեզուն բաժանել երկուսի, խախտել նրա միասնությունը, հետևաբար խախտել մեր ժողովրդի միասնությունը։ Ինչպես հայ ժողովրդի բոլոր հատվածները, որտեղ էլ նրանք ապրելիս լինեն, իրենց հայ են անվանում և իրենց հայ ազգից չեն անջատում և չեն հակադրվում հայ ազգին, այնպես էլ հայ ազգային լեզվի բոլոր ճյուղավորումները հայերեն են և ենթակա միասնական ազգային լեզվին։ Այդ առումով էլ եթե մոտենանք արևմտահայերենին, պետք է ասենք, որ նա նույնպես մեր ազգային լեզվի բարբառն է, թեև որոշ տերիտորիալ բարբառների համեմատությամբ ավելի մշակված և օգտագործելի ավելի շատ փաստեր ունեցող, բայց համենայն դեպս ընդհանուր ազգային լեզվին ստորադաս և ոչ թե նրան հավասար ազգային լեզու, որովհետև յուրաքանչյուր ազգ ունի մի միասնական և նրա բոլոր անդամների համար ընդհանուր լեզու։

ԸՆԿ. Ծ. ԱՂԱՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանությունից հարցերը» աշխատությունը խոշորագույն ավանդ է մարքսիզմ-լենինիզմի զանաքանում։ Այդ աշխատությունը սովետական զիտության զարգացման, նրա աննախընթաց վերելքի համար նորանոր հեռանկարներ է բացում։

Ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունից լույսի տակ ես ցանկանում եմ կանդ առնել հայոց լեզվի զարգացման հետ կապված մի կարևոր հարցի վրա, այն է՝ հրք և ինչպես է սխալում հայ ժողովրդական լեզվից հայ ազգային լեզվին անցնելու պրոցեսը։ Մարքս-լենինյան ուսմունքը՝ հասարակության պատմության վերաբերյալ, միանգամայն պարզ լույս է սփռում այս հարցի վրա։

«Ժողովուրդը» և «ազգ» հասկացողությունները պատմական կատեգորիաներ են, որոնք հանդես են եկել տարբեր էպոխաներում և արտահայտում են մարդկանց հասարակական կապերի ձևերը զարգացման տարբեր աստիճաններում։

Մարդիկ ամենավաղ ժամանակաշրջանում, իրենց զոյությունը պաշտպանելու և նյութական բարիքներ ձեռք բերելու համար, միավորվում էին և կոլեկտիվ ուժերով պայքարում բնության դեմ։ Մարդիկ սկզբում ապրում էին ոչ մեծ խմբերով, Հետո առաջացան կոլեկտիվներ, որոնք հիմնված էին արյունակցական կապերի ու տոհմական հարաբերությունների վրա։ Նախնադարյան համայնական կարգերի հիմնական բնիշտ տոհմ էր (род) — նախ մատրիարխատը (մայրական), իսկ հետագայում՝ պատրիար-